ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՏԱՐԱՆՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով եւ նորմերով, Էներգետիկ խարտիային կից 1994 թվականի դեկտեմբերի 17-ի Պայմանագրով,

ընդունելով բնական գազի ազատ տարանցման ապահովման անհրաժեշտությունը՝ անկախ ծագումից, նշանակման վայրից կամ նրա տիրոջից,

ընդունելով Համագործակցության մասնակից պետությունների ժողովրդական տնտեսությունը եւ բնակչությունը անխափան գազամատակարարմամբ ապահովելու նպատակով համաձայնեցված միջոցների իրականացման անհրաժեշտությունը,

Տնտեսական միության ստեղծման մասին 1993 թվականի սեպտեմբերի 24-ի Պայմանագրի դրույթների հետագա իրականացման նպատակով, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար.

"գազի տարանցում"՝ Կողմի տարածքով մյուս պետությունում ծագող գազի տեղափոխում, որը նախատեսված է երրորդ պետության տարածքի համար, պայմանով, որ կամ ցանկացած այլ պետություն, կամ երրորդ պետությունը հանդիսանում են պայմանավորվող կողմ:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում իրենց պետությունների տարածքով բնական գազի գազատարով ազատ տարանցումն ու պահպանությունը ապահովելու համար:

Կողմերից մեկի տարածքով տարանցմամբ մատակարարվող բնական գազը չի կարող օգտագործվել դրա տարանցումը իրականացնող Կողմի կարիքների համար:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը պարտավորվում են անհրաժեշտ, այդ թվում համատեղ միջոցներ ձեռնարկել այն բանի համար, որպեսզի Կողմերից ոչ մեկը չհայտնվի գազամատակարարման աղբյուրներից զրկվելու սպառնալիքի տակ եւ վնաս չհասցվի բնական գազ մատակարարող եւ դրա տարանցումը իրականացնող պետությունների շահերին:

ՀՈԴՎԱԾ 4

Սույն Համաձայնագրի Կողմերի միջեւ վեճի ծագման դեպքում, Կողմերը պարտավորվում են չդադարեցնել եւ չկրճատել գազի տարանցիկ մատակարարումները, մինչեւ տվյալ վեճի կարգավորումը:

Կողմերը ապահովում են նախկինում ձեռքբերված բոլոր պայմանավորվածությունների պահպանումը բնական գազի տեղափոխման պայմաններով, մինչեւ վեճի վերջնական կարգավորումը, սակայն գործարքի գործողության ժամկետից ոչ ուշ:

ՀՈԴՎԱԾ 5

Տարանցիկ գազատրանսպորտային համակարգում վթարի դեպքում, Կողմը, որի տարածքում տեղի է ունեցել վթարը, անհապաղ ծանուցում է այդ մասին շահագրգիռ

Կողմերին եւ ձեռնարկում բոլոր անհրաժեշտ միջոցները վթարի հետեւանքները վերացնելու համար՝ չսպասելով դրա պատճառների քննության արդյունքներին: Ընդ որում, մատակարարվող գազի կրճատված ծավալը բաշխվում է սպառողների միջեւ կնքված պայմանագրերին համապատասխան՝ տարանցիկ գազի ծավալներին համամասնորեն:

Կողմերը առաջնային կարգով իրականացնում են սարքավորումների, նյութերի, համալրող առարկաների եւ պահեստամասերի մատակարարում տարանցիկ գազատրանսպորտային համակարգերի վրա վերականգնողական եւ վերանորոգողական աշխատանքների անցկացման համար: Ընդ որում, Կողմերը չեն կիրառի մաքսային տուրքեր եւ դրանց հավասարեցված գանձումներ, ինչպես նաեւ ոչ սակագնային բնույթի սահմանափակումներ:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ կիրառման վերաբերյալ Կողմերի միջեւ, ինչպես նաեւ Կողմերի իրավունքները եւ պարտավորությունները շոշափող վեճերը, կլուծվեն շահագրգիռ Կողմերի միջեւ անմիջական խորհրդակցությունների եւ բանակցությունների կամ միջազգային իրավունքով նախատեսված այլ ընթացակարգերի միջոցով:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերը միջոցներ են ձեռնարկում բնական գազի տարանցման եւ սպառման համար՝ հաշվարկները ժամանակին ապահովելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու պահից:

ՀՈԴՎԱԾ 9

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալու օրվանից առնվազն վեց ամիս առաջ իր մտադրության մասին Համաձայնագրի ավանդապահին նախապես գրավոր ծանուցելու միջոցով:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1995 թվականի նոյեմբերի 3-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության

Գործադիր քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1997 թվականի հունիսի 3-ից: